

## Medicare

### Ի՞նչ է «Medicare»-ը

«Medicare»-ը 65 տարեկան և ավելի մեծ անձանց և մինչև 65 տարեկան հաշմանդամների համար նախատեսված՝ առողջության ապահովագրման ծրագիր է:

### Ինչի՞ համար է վճարում «Medicare»-ը

«Medicare»-ը բաղկացած է երեք բաժնից, որոնց օգնությամբ վճարում է Ձեր ստացած բուժօգնության համար:

- **A Բաժնով** վճարվում է հիվանդանոցային խնամի, ծերանոցում ստացած մասնագիտական խնամքի, տնային բուժսպասարկման և հոսպիտում ստացած խնամքի համար:
- **B Բաժնով** վճարվում է երթևեկ բուժսպասարկման համար: B Բաժնի մեջ են մտնում բժշկի այցելությունները, ֆիզիոթերապիան, շտապ օգնության կանչերը և բժշկական սարքավորումը, օրինակ՝ անվասայլակները և հենասարքերը:
- **D Բաժնով** վճարվում է դեղատոմսային դեղերի համար:

### Ինչի՞ համար չի վճարում «Medicare»-ը

«Medicare»-ը չի վճարում՝

**Ձեզ օգնություն է հարկավոր:  
Ձանգահարեք Առողջապահական իրավունքների  
(800) 824-0780  
Չայերենի համար խնդրում ենք սեղմել 9:**

Առողջապահական իրավունքների կենտրոնը (CHCR) Կալիֆոռնիայում գործող՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որն անվճար տեղեկատվություն և օգնություն է տրամադրում «Medicare»-ի անդամներին: CHCR-ը ֆինանսավորվում է պետական և մասնավոր դրամաշնորհների հաշվին: Այս թերթիկը ֆինանսավորվել է «Los Angeles County Area Agency on Aging»-ի MIPPA դրամաշնորհով:



- լսողական օժանդակ սարքերի համար.
- ատամնաբուժական ծառայությունների համար և
- ծերանոցում` խնամակալի խնամքի համար:

## Որքա՞ն արժե «Medicare»-ը

- Եթե Դուք կենսաթոշակ կամ անաշխատունակության նպաստ եք ստանում սոցիալական ապահովության կողմից, ապա «Medicare»-ի A Բաժինն **անվճար է**: Եթե Դուք անդ նպաստները ստանալու իրավունք չունեք, ապա «Medicare»-ի A Բաժնի ամսական վճարը կազմում է \$451:
- 2012 թ. B Բաժնի ամսական վճարը \$99.90 է:
- B Բաժնի տարեկան չապահովագրված մասը կազմում է \$140:
- «Medicare»-ի A և B Բաժնի ծառայություններից օգտվելիս Դուք նաև համավճարումներ կկատարեք:
- Դուք ամսական մուծումներ եք կատարում «Medicare»-ի D Բաժնի ծրագրին, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ծրագիրն ամսական վճարումներ չի գանձում: Բացի այդ, դեղերը ստանալիս Դուք համավճարում եք կատարում:
- «Medi-Cal»-ն իր վրա է վերցնում «Medicare»-ի D Բաժնի ամսական վճարը և «Medicare»-ի համավճարումները «Medicare» և ամբողջական «Medi-Cal» ունեցողների համար:

## Ինչպե՞ս դիմել «Medicare»-ուն ընդգրկվելու համար

«Medicare»-ուն ընդգրկվելու դիմումը ներկայացվում է Սոցիալական ապահովության վարչության միջոցով: Ձեր մերձակայքում կազմակերպության տեղական գրասենյակը գտնելու համար գանգահարեք (800) 772-1213 հեռախոսահամարով:

---

**Ուրիշ հարցեր ունե՞ք:**  
**Ջանգահարեք Առողջապահական իրավունքների կենտրոն՝**  
**(800) 824-0780 հեռախոսահամարով:**  
**Հայերենի համար խնդրում ենք սեղմել 9:**

---